ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ք. Գյումրի, Հաղթանակի պողոտա 6
հեռ. (0312) 5-06-00, Ֆաքս (0312) 5-77-71

04/2585-26

«01» սեպտեմբերի 2026թ.

Գյումրի համայնքի ավագանուն

Շիրակի մարզի դատախազության կողմից 17.06.2026 թվականին Գյումրի համայնքի ավագանուն հասցեագրվել է թիվ 64/862-26 գրությունը, համաձայն որի առաջարկվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ N 3157-Ա որոշման և դրա հետևանքները վերացնելուն ուղղված համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել իրավասու դատարան, իսկ հայց չհարուցելու պարագայում այդ մասին տեղեկացնել Շիրակի մարզի դատախազությանը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում Շիրակի մարզի դատախազություն ուղարկել թիվ 64/862-26 գրությամբ Գյումրի համայնքի ավագանուն ուղղված՝ պետության (համայնքի) գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցման վերաբերյալ համայնքի ավագանու կողմից առաջարկությունը ատանալու վերաբերյալ ապացույցը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կատ.
ՇՄ դատախազության դատախազ Տ. Հովհաննիսյան
հեռ. 511 309

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ք. Գյումրի, Հաղթանակի պողոտա 6, հեռ. (0312) 5-06-00, Ֆաքս (0312) 5-77-71

No 64/862-26

«17» հունիսի, 2026թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

Ուղարկում եմ **ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ N 3157-Ա որոշման և դրա հետևանքները վերացնելուն ուղղված պետության շահերի պաշտպանության հայց հարուցելու մասին**՝ Շիրակի մարզի դատախազության դատախազ Տաթևիկ Հովհաննիսյանի առաջարկությունը:

Առդիր՝ առաջարկությունը «3» թերթ և «1»լազերային սկավառակ

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ Ա. ՉԻՉՈՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ԹՈՒՂԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՂԹ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

Առաջարկություն

/ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ N 3157-Ա որոշման և դրա հետևանքները վերացնելուն ուղղված պետության շահերի պաշտպանության հայց հարուցելու մասին /

«17»-ը հունիսի, 2026թ. **համայնք Գյումրի**

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ N 3157-Ա որոշմամբ՝ Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի հարևանությամբ համայնքային հողամասում ինքնակամ կառուցված 75.06 քառ.մ մակերեսով կառուցապատված հողամասով 239,37 քառ.մ մակերեսով չկառուցապատված հողամասով 75,06 քառ.մ մակերեսով հասարակական կառույցը համայնքային սեփականություն համարելու մասին:

Գյումրու համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի՝թիվ N 2165 Ա որոշմամբ նշվել է՝

«(...) 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի «Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի հարևանությամբ համայնքային հողամասում ինքնակամ կառուցված 75,06 քառ.մ մակերեսով կառուցապատված հողամասով՝ 239,37 քառ.մ մակերեսով չկառուցապատված հողամասով 75,06 քառ.մ մակերեսով հասարակական կառույցը համայնքային սեփականություն համարելու մասին» N 3157-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Վերնագրում «համարելու» բառից հետո լրացնել «և օրինական ճանաչելու» բառերը,

2) Նախաբանի 1-ին պարբերությունում «կառույց» բառից հետո լրացնել «, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Գոհարիկ Ասլանի Սիմոնյանը» բառերը,

3) Նախաբանի 2-րդ պարբերությունում «կարգի» բառից հետո լրացնել «, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի» թվերը և բառերը,

4) Որոշման 1-ին կետում «սեփականություն» բառից հետո լրացնել «և այն ճանաչել օրինական» բառերը, 5) Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):»: 6) Որոշման մեջ ավելացնել նոր կետ հետևյալ շարադրանքով.

4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գոհարիկ Ասլանի Սիմոնյանին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: (...)»

Գյումրու համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի՝ N 2193-Ա որոշմամբ, հիմք ընդունելով թիվ N 3157-Ա և թիվ N 2165 Ա որոշումները, օրինական ճանաչված հասարակական կառույցը հասցեավորվել է քաղաք Գյումրի, Տիգրան Մեծի փողոց 31/1:

Գյումրու համայնքի ղեկավարի 01.06.2021 թվականի թիվ 1297-Ա որոշմամբ նշված հասցեում գտնվող 75.06 քմ արտաքին (56.55 քմ՝ ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտը 1.148.418 ՀՀ դրամ արժեքով, 12.3 քմ մակերեսով պարիսպը՝ 188.190 ՀՀ դրամ արժեքով, և 314.43 քմ հողամասը 601.819 ՀՀ դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոցի 1-ին նրբանցքի 7-րդ տան բնակչուհի Գոհարիկ Ասլանի Սիմոնյանին (ծնվ. 13.06.1970թ.):

Մինչդեռ կատարված ստուգողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի 33/1 հասցեի հողամասը 2005 թվականի մարտի 7-ին հաստատված՝ Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծով գտնվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով օտարելն արգելված հողամասերի շարքում:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 912-Ն որոշումը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

(...)

2. Սահմանել, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

(...)

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

(...):»

Վերոհիշյալ իրավական և փաստական հիմքերի համադրումից հետևում է, որ Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի 33/1 հասցեի հողամասը գտնվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով օտարելն արգելված հողամասերի շարքում, ուստի նշված հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույցի օրինականացումը հակասում է ՀՀ կառավարության 912-Ն որոշման պահանջներին:

Վերշորադրյալների համատեքստում՝ տրամադրելով հայցադիմումի համար հիմք հանդիսացող փաստաթղթերը՝ առաջարկում եմ 2-ամսյա ժամկետում օրենքով սահմանված կարգով հայց ներկայացնել դատարան՝ թիվ 08-001-1313-0240 կադաստրային ծածկագիրը կրող Շիրակի մարզի, քաղաք Գյումրի, Տիգրան Մեծի 33/1 փողոց հասցեում գտնվող հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույցի օրինականացման և ըստ այդմ այն՝ սպասարկող հողամասի հետ ուղղակի վաճառքով օտարելու գործընթացի խախտումները վերացնելու համար:

Արդյունքների մասին անհարժեշտ է սահմանված ժամկետում հայտնել Շիրակի մարզի դատախազությանը:

- Առդիր՝ «1» լազերային սկավառակ:

Շիրակի մարզի դատախազության
դատախազ՝ Տաթևիկ Հովհաննիսյան